

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«Երկիրներ և աստվածներ»

Ա. Քաղաքը Կոստան Ջարյանի օրագրություններում

Կոստան Ջարյանի օրագրությունների մի առանձին մասն են կազմում քաղաքները: Չկա մի օրագրություն, ուր չհիշատակվի և չվերլուծվի գեթ մեկ քաղաք: Քաղաքի նկարագրության այս հակումը պայմանավորված է նախասիրությամբ, իր Ես-ով, իր աշխարհայացքով: Իր ճաշակով ու մտածողությամբ Ջարյանը ուրբանիստ է և միշտ հիացնունքով է խոսում քաղաքի մասին. «Ես սիրում եմ լսել քաղաքների մեծ սիրտը և նրանց երակներից վազող աղմկալից կրակի ճարձատումը: Ջգալ նրանց կյանքի տեմպը և նրանց շնչառության խորությունը» (Ն., 427): Քաղաքի հանդեպ իր սերը Ջարյանն արտացոլել է նաև «Արևմտյան քաղաք» արձակ բանաստեղծության մեջ, էսսեներում, «Հայրենիք» ամսագրում 1930թ. հրատարակած «Քաղաքներ» խոհագրությունում (վերջինս 1975թ. ամբողջապես հրատարակվել է Անթիլիասում): Քաղաքը Ջարյանի համար կենդանի օրգանիզմ է: Այն մարդեղեն է. ծնվում է, երիտասարդանում, մեռնում, ինչպես մարդը, ազգը, մշակույթը, քաղաքակրթությունը: Այն տրոփում է մարդկային սրտի և զարկերակի նման: Քաղաքի այդ տրոփյունն ինքնանպատակ չէ: Այն փորձում է հասնել մարդկային գոյի, հանրային-մշակութային կամ, ինչպես Ջարյանն է անվանում, «համայնական» կյանքի ռիթմին: Քաղաքը երկրի զարկերակն է, նրա մշակույթի, պատմության անմիջական արտացոլումը: Այն քաղաքակրթության անմիջական արգասիք է և ինքնին քաղաքակրթություն, քանզի ուղղորդում և թելադրում է քաղաքակրթության հետագա տեմպն ու ուղին:¹

«Համաշխարհային պատմությունը,- դիտում է Օսվալդ Շպենգլերը,- քաղաքային պատմությունն է»: Իր «Արևմուտքի անկումը»² աշխատության մեջ նա թվարկում է ութ քաղաքակրթություն: Փիլիսոփան քաղաքակրթության առաջացումը պայմանավորում է քաղաքի առաջացումով, որտեղից՝ գերմաներեն zivilisation բառը: Ուստի քաղաքն, ըստ նրա, թե՛ պատմություն է, թե՛ քաղաքակրթության պատմության արտացոլում, թե՛ մշակույթի ու մտքի կենտրոն և թե՛ ոգի: Իր նավատորմներում Ջարյանը փորձում է վեր հանել այն ընդհանուրը, որ բնորոշ է տարբեր մտայնությունների և քաղաքակրթությունների պատկանող քաղաքներին, ինչպես նաև այն յուրօրինակը, որ բնորոշ է օրագրություններում կոնկրետ մատնանշվող երկրի քաղաքներին: Առարկան ճանաչելի է դառնում ընդհանուրի և մասնավորի համատեքստում: Ջարյանական դիտարկման մեթոդն ու սկզբունքը կարելի է համարել համընդգրկուն, իսկ նկարագրություններն ու վերլուծությունները խորքային են և գիտականորեն պատճառաբանված: Նա մշտապես համադրում է տարբեր մշակույթների, ազգերի, երկրների, տարբեր ժամանակների քաղաքներ: Այդպես իրար կողքի են հայտնվում Վենետիկը, Հռոմը, Պոլիսը, Ամստերդամը, Հարլեմը, Վոլենդամը, Մաակեն, Պետերբուրգը, Վիեննան, Երուսաղեմը, Փարիզը, Երևանը, Թիֆլիսը, ամերիկյան քաղաքները... Միաժամանակ քաղաքիճարտարապետական

1 Այս մասին առավել մանրամասն խոսում ենք թե՛ այս գլխի վերջում, թե՛ երրորդ գլխի առաջին ենթագլխում:

2 Շպենգլերի աշխատության վերնագիրը ռուսերեն թարգմանվել է «Եվրոպայի մայրամուտը», որը, սակայն, սխալ է: Շպենգլերն իր աշխատությունը վերնագրել է «Արևմուտքի անկումը» (Der Untergang des Abendlandes): Ուշագրավ է, որ գրքի ռուսերեն թարգմանության բովանդակության մեջ չի գրվում «Եվրոպա»՝ հակառակ վերնագրին: Ջարյանն ինքն էլ «Եվրոպա» տարբերակը չի գործածում, այլ միայն «Արևմուտք» («Արևմուտք» խոհագրությունը, «Անցորդը...»-ում գետեղված «Արևելք և Արևմուտք» հատվածը): Ուստի անհրաժեշտ է նկատառել, որ Արևմուտքի և Եվրոպայի երկվությունը վրիպակի արդյունք չէ:

իր դիտարկումներում նա զուգահեռներ է անցկացնում հայ ճարտարապետական մտքի հետ:

Քաղաքը, իր ժամանակաշրջանն է վերլուծում Ջարյանը, հուշում է ողբերգություն, քանզի այստեղ հայտնաբերվում են միթոսի անկման ու ոչնչացման արմատները: Այն կլանում է միտքը և գայթակղում դյուրին կենսաձևի խոստումներով: Սակայն քաղաքը չպետք է լինի «մտացածին»: Այս իմաստով որպես օրինակ նա բերում է Պետրոս Մեծի պարտադրանքով կառուցված ռուսական քաղաքն առհասարակ, և արհեստածին ու կեղծ Պետերբուրգը մասնավորապես՝ այն համադրելով հոլանդական քաղաքին: Պետականության ու քաղաքաշինության կառուցման հարցում ռուս թագավորն առաջնորդվել է՝ հոլանդական օրինակն աչքի առաջ ունենալով: Պետերբուրգն իր կենսանյութն առել է ոչ թե սեփական պատմությունից ու հողից՝ «ռուսական ստեպներից», այլ «բռնի մտցված նորածնությունից»: Եվ երբ զարգացումը շեղվում է իր բնականոն ուղուց, դառնում ընդօրինակում, զրկվում սեփական դիմագծից ու հոգեկան բովանդակությունից, այն վերածվում է ուժ ու կարողություն արտադրող մեքենայի: Այդպիսին է և Պետերբուրգը, որն իր արտաքին նկարագրով հուշում է «մեծության, ուժի, առաջադիմության» մասին, մինչ էապես բնագանցական է, ամուլ և կենդանի սոսկ իր «քանակությամբ»:

Կեղծիք է նաև Պոլիսը: Բայց այն բոլորովին նոր դրսևորում ունի և այլ բովանդակություն: Այն ներկայանում է իր անկայունությամբ, անցողիկությամբ, և դա հավանաբար այն պատճառով, որ երկու տարբեր մտայնությունների քառսային ձուլվածք է՝ երկու աշխարհամասերի խաչմերուկ, թատերայնորեն դիմակավորված, կեղծ, «հրեշային» ու «անիրական» խառնուրդ: Անհյուրընկալ ու մակերեսային այս քաղաքը ցուցադրում է բռնության, արյան ու բարբարոսի հոգեբանական գրգիռը, որի ողջ կենսափիլիսոփայությունը կենտրոնացած է միայն մեկ ձգտման մեջ՝ «Լինել, ինչ գնով էլ լինի»:

Պոլսում ամեն մի թաղամաս ունի իր դիմագիծը, գույնը, ձգտումը: Մյուս թաղամասերից Սկյուտարն առանձնանում է իր «ուրոյն» մտայնության առկայությամբ: Գավառներից եկած ու այստեղ բնակություն հաստատած հայ համայնքը պահպանել է գեղջկական կենցաղի ավանդավեպը: Նա ներդաշնակել է կենսազգացողության իր թրթիռները բանականությանը, ապրում է «խաղաղ եւ վերասլաց, երկնքի հետ խոսող, աստղերի հետ պլպլող, գաղափարը ընդգրկող նվիրական փափագով»:³ Ու նաև Սկյուտարը գրական մթնոլորտի կենտրոնատեղի է՝ Դուրյան, Ինտրա, Տեմիրձիպաշյան... Նրանց պոեզիան՝ օդի պես թրթռում ու թեթև, հովի պես մեղմ, բարձրածայնում է, թե «Սկյուտարը վաւաշոտ չէ, այլ սիրահար է»: Բերան Սկյուտարի հակապատկերն է, քանզի այն «ոճավորվել» է Պոլսում հայտնված բոլշևիկյան հեղափոխությունից փախստականների մակերեսային հոգեբանությամբ ու «անհատականությունից զուրկ» մտայնությամբ՝ «Խանութպան էին անուանում մեզ, արհամարհում էին, վիրաւորում, իսկ այսօր իրենք, Պոլսից մինչեւ Փարիզ, էլ ինչէր չեն ծախում: Հոգի, մարմին, գողացած իրեղեններ եւ խիղճ»:⁴ Այն նյութապաշտ միջակություն է, զուրկ հոգեկան բովանդակությունից ու մտքից, բոլոր սրբությունները ուրացած, բարոյագուրկ «տենդոտ մի հրէշ, որի ձեռքի մէջ ծածանում է արշաւանքների անողոք դրոշը: Պերան կազմուած է փոքրիկ բաներից: Նա միջակ է եւ անտանելի, վանքից փախած երիտասարդ վանականի աժան լրբութեան նման: Շնացած ծերունու լորձունք է: Պոռնկացած Սուսանայի

³ Կոստան Ջարյան, Երկեր, Անթիլիաս, 1975, էջ 29:

⁴ Նույն տեղում, էջ 40:

մսերի վրայ դողդողացող ձեռք»:⁵ Եվ քանի որ ռուսն ընտրել և ընթանում է քաղաքակրթության ճանապարհով, ապա հայը, ըստ գրողի, պիտի հակադարձվի, ընդդիմանա նրա դավադիր, հաճախ դավաճանող ու չարական էությանը, քանզի «Հայը գերազանցապես հակառուս է»:⁶ Այսպես առանձին-առանձին անդրադարձնալով Պոլսո թաղամասերին, Ջարյանը եզրակացնում է, թե «Պոլիսը դժուար ըմբռնելի է, որովհետեւ նա քաղաք չէ, այլ տեսարանների և համայնքների հավաքոյթ: Աշխարհների խառնուրդ: Տիպերի և մտայնությունների համապատկեր»:⁷ Խորամանկ ու թատերական այս քաղաքը անցողիկության խորհուրդն է: Այն ամրակայվում է հիշողության մտածիրում դեպքերի ու դեմքերի «յիշատակի զօրութիւնով... Եւ, լաւագոյն պարագային, հեռաւոր երազանքի դիրք է բռնում»:⁸ Ջարյանը ցանկանում է հասկանալ, ճանաչել Պոլիսը, նրա մտայնությունը ոչ միայն թաղամասերի, այլ նաև ճարտարապետական լուծումների, աշխարհագրական դիրքի նկարագրությամբ և պատմության տարբեր ժամանակների համադրությամբ: Բյուզանդական կայսրության մայրաքաղաքից ոչինչ չի մնացել՝ բացառությամբ պատմության արնոտ էջերի ու անունների: Հելլենականի, փիլիսոփայականի, բանաստեղծականի ոչ մի հուշ: Ամեն բան այստեղ փոխարինվել է մզկիթների շարանով, բռնակալին ուղղված քծնանքով, շողոքորթ ժպիտով: Ոճը վերածվել է ոճավորման, միտքը՝ բնագրի, կյանքը՝ նյութի համար մղվող պայքարի, անհետացել են դյուցազնականն ու տիպականը: Շուկա հիշեցնող այս քաղաքում վերացել և շարունակում է վերանալ Անձը՝ վերածվելով «ոհմակ» հիշեցնող անկերպարան զանգվածի: Կենդանական իր բնագոյները, արյան իր ծարավը, ահի ու սարսուռի զագանային իր հագուրդը բավարարելիս քաղաքը հուշում է «արիւնի կառնավալ»:⁹ Մահվան, վախի մղձավանջային օրերում մարդիկ քաղաքում քայլում են ստվերի պես, քանզի «Պոլսոյ ամէն մի բլուրը մի ճիչ է, ամէն մի թաղամասը՝ սառած մի դրամա, ամէն մի փողոցը՝ ոճիրների մի յիշատակ»:⁸ Նախճիրի այդօրինակ օրերին քաղաքը, որպէս բարկացած ծախու մի կին, իր «մթագնած կոպերի տակ ատելութեամբ լեցուն բիբերը ոլորում է եւ ճակատի սպառնական կնճիռները ժողովում: ...Պոլիսը, չվճարուած, ցասունով լեցուն պոռնիկի է նմանում»:⁹ Հավանաբար այդ պատճառով է Ջարյանը գրում, թե «Պոլսից պիտի փախչել, Պոլիսը պիտի յաղթել»:¹⁰

Քաղաքն անկրկնելի է ներկայանում միայն հեռավորության բարձունքներից: Իր էությանը այն նմանվում է «օրգանապես թերի» մի կնոջ, որն իր լայնաբաց ժպիտով հրավիրում է, առինքնում, իսկ երբ ճաշակվում են նրա «հյուրընկալության» պտուղները, այլևս մերկանում է պատրանքը՝ ցուցադրելով ձգտումներով ու ապրումներով ստորաքարշ առևտրականին ու ծախու կնոջը, քանզի այստեղ «Ձգացումը սանտիմետրով է չափում՝ վաւաշոտ մատերի մէջ շոյուելով»:⁹ Այստեղ մարդը, առավել ևս միտքը, բացակայում է. նա ենթակայական է, անբարո ու անզգա, հեշտագրգիռ սարսուռ, որ շողարծակում է լույսի, գեխության, ոսկու զգլխիչ շռայլությամբ: Իր խորքում Պոլիսը զուրկ է ներդաշնակությունից, հոգեկան զարգացման ձգտումից, թռիչքից, առհասարակ էությունից: Պարզապես զարդարված

⁵ Նույն տեղում, էջ 26:

⁶ Նույն տեղում, էջ 41, 43:

⁷ Նույն տեղում, էջ 19:

⁸ Նույն տեղում, էջ 482:

⁹ Նույն տեղում, էջ 497:

¹⁰ Այս մասին առավել հանգամանալից տես Մարկ Նշանեան, Եղեռնի լուրիները Կ. Ջարեանի արծակին մէջ, «Բազմավէպ», 1995, էջ 370-373:

թատերական մի բեմ է՝ «Էութեան խորհուրդը ամբողջովին դասաւորուած արտաքին ճառագայթումի մէջ: Ենթագիտակցութիւնը համր է եւ խուլ»:¹¹

Աներևակայելի է Պոլիսն արևածագին: «Արևը՝ մեծ Պարոնը», նախ հրավառում է Սկյուտարի բլուրները, ապա իր ոսկեգօծ նետերը ուղղում Բոսֆորին ու «մեղմ սուրումներով Պոլսոյ վարդագոյն մետրը շոյում»: Քաղաքը շրջապատող մզկիթները՝ հրաշեկ լույսի մեջ ողողված, ողջույնի խոնարհումով գլուխները կախում են գիշերային արբունքից արթնացող պչրուհու առջև: Քաղաքն իր սիրեկանին է փնտրում, և տեղի է ունենում նրա ու արևի մերձեցման միստիկ մի ծես. «Արեւը առաջանում էր, ոսկէ ձեռքերով քաղաքի ուսերից վեր էր առնում ծիրանէ պատմուճանները, մետաքսէ շապիկները, ու թրթռացող մերկ մարմնի վրայ թափում էր իր ջերմութեան այրող եւ կատաղի յոյգերը»:¹² Ամեն բան ընդգրկվում է կրքի հրդեհի մեջ, այնուհետև առօրյան սկսում է վազքի կրկնող իր ռիթմը: Քաղաքը՝ «ջղերը թոյլ եւ մետրը տարածուն», պառկում է, «թելերը բաց անում», սիրառատ աչքերը հառում օրվա իր հերոսին՝ բաժանման համբույրի ակնկալիքով, ապա հոգնում... Ահա նաև գիշերային Պոլիսը՝ լույսերով ողողված, «Էութեան փոփոխական գաղտնիքը, արտաքին գեղագրգիռ հրաշքը, ներքին պղծուած ու պղծող էութիւնը» գոյների ու գուգսի տակ հմտորեն թաքցրած: Ու նաև անմեկնելի է քաղաքը բնութագրող մի այլ հատկություն: Ինչպես դա բնորոշ է իր գեղեցկությունը գիտակցող թեթևամիտ ու անբարո կնոջը, Պոլիսը գայթակղելու, դեպի իրեն ձգելու անկռահելի հնարքներով է օժտված: Դա աներևույթ երագներից չգրված հեքիաթներ հյուսելու անիրական հրաշքն է՝ արկածախնդիր, հրապուրիչ, վտանգավոր...

Ու քաղաքում միակ բացառությունը Գալաթիո կամուրջն է, իսկ նրանից դուրս՝ Այա Սոֆիայի ճարտարապետության հանձարը՝ որպես կանթեղ...

Այլ է հոլանդական քաղաքը: Այն ներկայանում է որպես հեքիաթային իրականություն, քանզի հմտորեն ու ճաշակով ներդաշնակել է հինն ու նորը, մարդկային ջանքն ու երագանքը: Չնայած ուժգին ձգտումին դեպի նորն ու արդիականը՝ հոլանդական քաղաքի «բնական զարգացումը» խաթարված չէ բռնագբոսիկ ճիգերով, չնայած ուժգին ձգտումին դեպի նորաձևությունը, քանզի քաղաք կառուցելն էլ արվեստ է: Հոլանդական քաղաքն աչքի է ընկնում ճարտարապետական ինքնատիպ լուծումներով, ճաշակի նրբությամբ՝ համադրելով ու հաշտեցնելով միմյանց անցյալի ու ներկայի ճարտարապետական մտքի արգասիքները: Հոլանդական քաղաքը, նրա մտայնությունը հասկանալու համար չպետք է մոտենալ նրան, ինչպես այլ երկրների պարագայում է: Այստեղ ոչ թե մարդն է ցուցադրում-բացատրում երկիրը, այլ վերջինիս բնույթը ճանաչելու համար մշտապես պիտի հասկանալ այն արարող էթնոսին: Այս իմաստով, հոլանդական քաղաքը երբեք չի ծանծրացնում իր ջրանցքներով, տարբեր ոճերի պատկանող ճարտարապետական շինությունների ու դղյակների համաչափ դասավորությամբ:

Անշուշտ, տարբեր են երկրի կենտրոնական-խոշոր և ծայրամասային քաղաքները: Վերջիններն ապրում են իրենց ներքին, ինքնուրույն կյանքով: Մասկեն, Հարլեմը, Ջաանդամն առանձնանում են մթնոլորտի պատմականությամբ: Այստեղ պահպանվել են ճարտարապետական նախկին շինությունները, որոնք, սակայն, ներկայումս կատարում են արդի աշխարհի ֆունկցիոնալ պարտականությունների դեր: Սա ստեղծում է ոճավորման ու մտայնության խեղաթյուրված, դիմագրկված խղճահարույց պատկեր, որ «տարօրինակ կերպով խառնում են իտալական Վերածննդյան մոտիվները տեղական ոճավորումների հետ»: Հարլեմն առանձնանում է Ֆրանց Հալսի թանգարանով, Վոլենդամը՝ անցյալը շահագործելու և

¹¹ Կոստան Ջարյան, Երկեր, Անթիլիաս, 1975, էջ 19:

¹² Նույն տեղում, էջ 495:

կեղծելու թատերայնությամբ, Ջաանդամը՝ Պետրոս Մեծի տնակով, նեղ փողոցներով, ջրաղացներով: Այն խոշոր նավաշինական-արդյունաբերական կենտրոն է՝ «գործունյա կյանքի իդեալը մարմնավորող»: Տնտեսական կենտրոն են նաև Ռոտերդամը, Ուտրեխտը, Լահե (Հաագա)՝ բազում թելերով կապված միմյանց ու աշխարհի հետ: Երկրի զարկերակը մայրաքաղաք Ամստերդամն է: Այն կենսականության, պայքարի ու ամրության խորհրդանիշ է, բանաստեղծություն, կյանք: Ամստել գետի ափերին կառուցված այս քաղաքը գաղտնիքների, ժամանակների, դասերի ոչ քառասյին խառնուրդ է: Այն հրապուրում է իր մտերմիկ ձգողությամբ, «քնարական բնույթով», նրբահյուս երկնքով, քողարկված թախիծով, կենսականությամբ: Քաղաքն էլ ունի իր հմայքը, կիրքը, ուժը, սերը. «Ամստերդամում իրականությունը միացած է վառ երևակայությանը: ...Ամստերդամը կայուն ներկայություն է» (Ն., 429): Այն մարդուն թելադրում է կենսակերպ ու կենսափիլիսոփայություն, տրամադրում է խորհելու գոյի, հավերժի, անցողիկի, մարդկայինի շուրջ: Ամստերդամը խորհելու տրամադրություն է առաջ բերում, և ականա մերկանում է մարդկային միտքը: Իր հրապույրներն այն մատուցում է ողջ շքեղությամբ, ներկայանում բոլորովին տարբեր, հատկապես ջրուղիներով նավարկելիս, երբ ցցուն են դառնում տեսարաններն ու շինությունները, ամենափոքր դետալները, ոճերը՝ «քնարական» ու «խորհրդավոր»: Միայն թե Ամստերդամին ևս, ինչպես մեծ քաղաքներում հաճախ է պատահում, բնորոշ է ինքն իրեն կրկնելը: Որոշ նմանատիպ շենքեր ու հաստատություններ քաղաքի տարբեր ծայրամասերում ցցվում են ու հուշում իրենց ճնշող ներկայությունը: Եվ սա խորապես զարմացնում է Ջարյանին, քանզի հուլանդացուն «ոչ ստեղծագործական թռիչք և ոչ հնարողական թափ է պակասում»:

Ամստերդամի՝ ջրի վրա կառուցված լինելու հանգամանքը շատերին դրդել է ընդհանրություններ գտնելու Վենետիկի հետ: Սակայն Ջարյանը հակված է հակառակ մտքին: Գետի, կամրջի առկայությունը բոլորովին էլ ընդհանրություններ չի գծում Վենետիկի ու Ամստերդամի միջև: Այստեղ է ի հայտ գալիս քաղաքների՝ ըստ սեռական բնորոշման բաժանելը, որին կվերադառնանք քիչ ուշ: Ամստերդամն իր էությանբ առնական է՝ ջլապինդ, մկանները ձգած, «պնդակազմ» ու «բռունցքները պատրաստ հարվածելու»: Մինչդեռ Վենետիկը փախչող ու մշտապես փոփոխվող հավերժ հրապուրող կին է, որ գրգռե, սեռ ու սեր է մարմնավորում, պատրանքածին է ու խաբուսիկ՝ մշտապես կրկնելով մարդկային երևակայության փառահեղ դրոշմը, մտքի թռիչք է, անցյալի գեղեցկությամբ ապրող ու այն շահագործող մեռած մի հեքիաթ. «Վենետիկը քար է: Քանդակված մարմար, պորֆիր, գրանիտ: Լույս, շուք, լուսին: Վենետիկը մոգերի աշխարհն է՝ ձեռքերը լեցված թանկարժեք իրեղեններով, միտքը փախած դեպի հեռուները, սիրո ծարավ, մեջքի գոտին թույլ: Վենետիկը մեռած միթոս է» (Ն., 439): Այն հիշատակների զարդարված հնություն է, ուր ջրանցքներն ու «սապատավոր կամուրջները», այլևայլ շինություններն այսօր շինծու ժպիտներ են՝ անցյալից ավանդված: Վենետիկը գոյում է՝ շահարկելով պատմությանը հանձնած փառքի իր էջերը՝ որպես «կենդանի տեքոռ»: Այն պահպանել է ձևը՝ զրկվելով բովանդակությունից, ապագայում հույզեր վառելու երբեմնի կարողությունից: Ծերացած է ու անկենդան՝ այլևս վատնած կենսական գրգռ ու հույզ. «Կոթող: Հիշատակ: Մելամաղձոտ ժպիտ» (Ն., 425): Քաղաքը կենսափորձ ունեցող քմահաճ մի տարփուհի է, որի հմայքն ու ուժը կենտրոնացած են անցյալից բերած անթարգմանելի խորհուրդներում. «գեղեցկուհի է օձուրոված գաղտնիքներով՝ որ մեզի վարդեր կը ներկայացնե և որ մեզ կը դաշնահարե լռության մեջ» (Ն., 59): Իրականում Վենետիկը ոչ այլ ինչ է, եթե ոչ սնանկացած արիստոկրատիկ կեցվածքով մի քաղաք, որ խնամքով քողարկում է դա, և գիտի հրապուրելու բոլոր բանաձևերը...

Ջարյանը գրեթե նույնն է արձանագրում իտալական մի այլ քաղաքի՝ Հռոմի պարագայում, սակայն փոքր-ինչ վերապահումներով, քանզի նկատելի է, որ Հռոմ ասելիս Ջարյանը նկատի ունի ոչ միայն քաղաքը, այլ նաև նրա մտայնությունը, մշակույթը, կայսերապետությունը միաժամանակ: Հռոմն անցյալի իր կոթողներով «անվերջ վերադարձ» է, քանզի գալիս է պատմության խորքերից: Այն «կայուն ներկայություն» է՝ տրոհված անցյալի և ներկայի ժամանակային հոլովությամբ: Ամեն բան, դիտում է գրողը, դարձել է արհեստական, դյուրին կառավարելի, անդեմ, կյանքից հեռու. փոխվել են մարդը, նրա մտավոր կարողությունները, նա կորցրել է հոգեկանը, վերածվել ստրուկի: Հռոմի մտայնությունը Ջարյանն անվանում է Սանչո Պանչո՝ արկածախնդիր, փիլիսոփայությունից, արվեստից, ինքնուրույնությունից, ստեղծագործելու ունակությունից զուրկ մի քաղաք՝ վերին աստիճանի շարժուն, գործունյա, հանդուգն, ամեն միջոցի դիմող՝ իր նպատակին հասնելու համար, ամեն զնով հաջողություն փնտրող, կոպիտ, բիրտ, վայրենի. նա սառը բանականություն է և հաշիվ՝ «պառկած Մշակույթի և Պարապի մեջտեղը» (Ն., 391): Նրա անցյալն ամփոփված է Վատիկանի թանգարանում: Այստեղ ցուցանմունքները հուշում են սնափառության, փառքի, նյութի համար մղված մշտատև պատերազմական շունչն ու զենքերի շաշունը, ծերակույտի ճառերն ու ծափահարության արձագանքը, իսկ կենդանի թվացող կիսարձանները՝ վաշխառուին ու առևտրականին: Հռոմի գաղափարախոսությունը կենտրոնացած էր մեկ բառում՝ հարստություն: Դա միակ ուղին էր, որ տանում էր «ուժի և իշխանության»: «Հակազավառ» բնութագրվող համաշխարհային մայրաքաղաքի անկշտում հայացքն ու «ագահ աշխորժակը նվաճում էր աշխարհի բոլոր շահագործելիք վայրերը»:

Հռոմի արտաքին կերպարի վրա ազդել են ժամանակաշրջաններն ու նրանց բնորոշող մշակութային մտայնությունները: Այն և՛ հանրապետական է, և՛ կայսերապետական, և՛ անտիկ, և՛ ժամանակակից, և՛ նախապատերազմական, և՛ պատերազմական, և՛ բարոկկո, և՛ վերածննդյան, և՛ քրիստոնեական՝ ստեղծելով ոճերի ինքնատիպ խառնուրդ՝ «ամբողջագումարված միություն»: Հռոմում ներկա են «պատմության բոլոր շրջանները», իսկ ինքը՝ քաղաքը, «ներկա է ժամանակի բոլոր աստիճանների վրա»: Այս հանգամանքը պատրանք է ստեղծում, թե մարդն ապրել է ոչ թե մեկ, այլ մի քանի կյանք, և քայլելով Հռոմի փողոցներով՝ հանդիպում-ծուլվում է դրանց, անցյալի հիշողություններին ու զգացումներին: Սա ցուցանում է քաղաքի կենսափիլիսոփայությունը՝ որպես մշտապես «հավիտենականության» ձգտողի: Մյուս կողմից՝ Հռոմն ինքն էլ մեկնաբանվում-կերպավորվում է ժամանակների կենսազգացողության, քաղաքական շարժերի, անհատական մոտեցման համաձայն. «...եօթը բլուրների եօթը խորհուրդները շարունակում են ապրել տարօրինակ ներդաշնակութեան մէջ: Հակասական, բազմապիսի, այլանդակ եւ մեծի, ինչպէս մեծ գրքերը, ինչպէս Աստուածաշունչը: Անողոք եւ բարի, անբարոյական եւ խստապահանջ, ահեղ եւ գեղեցիկ, խորաթափանց եւ մակերեսային, հին եւ միշտ նոր, մեծաթռիչք եւ փոքրոգի»¹³ Հավանաբար դա է Հռոմի փոփոխական երևալու պատճառը: Իրականում, ճշգրտում է Ջարյանը, Հռոմի հարատևության գաղտնիքը «ինքն իրեն հավատարիմ» մնալու մեջ է: Ժամանակներին ու մտայնություններին զուգահեռ նա մանևրում է, կարողանում փոխել իր կերպը, գույնը, կարողանում հառնել իր ողջ փառահեղությամբ կամ «չքանալ աներևույթի վերածվելով»: Քաղաքն այդ կերպ ցուցաբերում է զգոնություն ու խոհեմություն՝ նպաստելով իր լինելությանը նաև պատմության դժխեմ պահերին: Այս իրողությունը, սակայն, հոգեբանական ընդգծված սառնություն է մտցնում քաղաքի հետ մարդկային շփումներում, որոշակի հեռավորություն սահմանում՝ այդ կերպ փորձելով թաքցնել իր բովանդակագուրկ

¹³ Նույն տեղում, էջ 616:

էութիւնը, նախանձն ու չարութիւնը: Անշուշտ, զարյանական բնութագրումները խիստ են և որոշ իմաստով չափազանցված, երբեմն՝ ընդգծված հեգնական, սակայն այս կերպ նա փորձում է ցցուն դարձնել քաղաքի զարգացման և մտայնութեան նյութականացված ներկան ու անկերպարան թվացող ապագան: Պատճառը, փորձում է բացատրել նա, «քրիստոնէութեան հաջողութիւնն» է, նրա ասկետիկ, բայց «ջերմութիւնով, տաք մարդկային զգացումով, հույզով, երագով» լի տաճարը:

Փոփոխականութեան դրսևորում չէ՞ն արդոյք աշնանային Հռոմի և իրիկնային Հռոմի հայտնութիւնները: Ինչպէս մարդիկ են ըստ իրենց արտաքին ու հոգեկան նկարագրի լինում տարբեր, այդպէս և քաղաքը, ինչպէս տրամադրութիւնն է փոփոխական ըստ տարվա եղանակի, դարի, ժամանակաշրջանի իշխող մտայնութեան, պատմաքաղաքական նկրտումների, կրոնահայեցական ծագումների ու նույնիսկ գիտատեխնիկական իմացականութեան, այդպէս և քաղաքը կարող է կերպարանափոխվել ու հանդերձավորվել, քանզի «քաղաքներն էլ իրենց հատուկ կյանքն ունեն, ինչպէս մարդիկ» (Ն., 200): Հռոմը վավաշուտ է, գեր ու ծուլ, բայց աշնանն աննյութական է դառնում, բնազանցական, թեթև-եթերային՝ ենթակա մակընթացութիւն-տեղատվութիւնների, բազմերանգ ու անձև-անգույն-անհրապույր, կամ հսկայական՝ իր ներքին ուժով, ինքնակա ու հավիտենական: Աշնանային Հռոմը թռիչք է ու լույս: Այդ զգացողութեամբ պարուրվելով՝ մարդկային հոգին ներդաշնակում է աշխարհի, Ես-ի ու տիեզերքի հետ...

Իրիկնամուտին քաղաքը ներքաշվում-ներսուզվում է իր մեջ, լռում, լսում, թեև արտաքուստ հակառակ պատկերն է: Հռոմում վերջալույսը «թատերական է»: Երկինքը լույս է ճառագում, թվում է՝ բոցավառվում է ս. Պետրոսի եկեղեցու գմբեթը, ապա մարում են վերջին ձայները, և «Հռոմը տխրում է ու մեղավորի կերպարանք առնում»... Հռոմը զարյանական խոհերում հաճախ է հակադրվում Աթենքին, քանզի իր ոճը, էութիւնը, միջը զավթել է նրանից՝ առանց որոշակի սկզբունքի, անհետևողականորեն՝ չգիտակցելով, թե «աստվածներին պետք է ստեղծագործել»: Աթենքը ոգու, մտքի, իմացականութեան մշտակա թռիչք է՝ ամենատես, իմաստուն, ազնիվ, հերոսական: Ջարյանն Աթենքը բնութագրում է մեկ բառով՝ «Միջերկրականի» կամ «Հոմերոս»: Իսկ հոմերոսն «Առասպելները, միթոսները և աստվածները դուրս են ցցվում մեր մտքի ամեն մի անկյունից և շրջապատում մեր ներկան»՝ կյանքի ու մահվան, ճշմարտի ու կեղծի, իրականի ու անհավատալիի հակադրամիասնութեամբ՝ որպէս անփոփոխ իրողութիւն (Ն., 394): Դրանք շարունակում են ապրել նաև այսօր, կան՝ չնայած «փիլիսոփայական ու կրոնական նորանոր» հայտնութիւնների, «Որովհետև մեծաթռիչք բանաստեղծութիւն են, ուստի ճշմարտութիւն: Միջերկրական աշխարհը հավասարակշռված է ոգու բարձրութիւններով: Ես-ը իր վերացման կետին է ենթարկում բոլոր հակադրութիւնները» (Ն., 394-395): Նրա շունչը զգալի է, կենդանի, անկեղծ, մեծ: Այդ մտայնութիւնը Ջարյանն անվանում է «բանականութիւն»: Այն ի գորու է ընդունել, հասկանալ կյանքն իր դրսևորումներով ու քնայքներով՝ հնազանդվելով ամենագոր աստվածներին և ամեն բան բացատրել ճակատագրով: Աթենական միտքը մշակել է մի գոյութենականութիւն, որն այսօր էլ զարմացնում ու հիացնում է իր կատարելութեամբ: Սա անհատականութիւնը պահպանելու հնարավորութիւնն է՝ «ապաստանելով մյուս կեսի մեջ»: Այդ գոյափիլիսոփայութիւնը Ջարյանն անվանում է «հոլովում» (Ն., 396): Ժամանակի, մահվան, անէութեան հանդէպ քաղաքի փիլիսոփայական այդ կեցվածքը նպաստած է նրա հարատևութեանը: Թեև ներկայում նորահայտ գաղափարախոսութիւնների ծանծաղուտում Աթենքը կորցրել է ինքնութեան իր դեկը՝ խարխափելով անորոշութեան մեջ, թեև փորձում է կյանքը կազմակերպել-զետեղել անցյալի ու նորի միջակայքում՝ ազգայինը չկորցնելու բարի

մտադրությամբ, այնուամենայնիվ, Ջարյանի՝ «Երազատեսի» աչքերն արձանագրում են, թե Աթենքն անգերազանցելի է, անհաղթահարելի:

Ամերիկյան քաղաքի, նրա իրականության ու մտայնության արձանագրությունն առաջին հայացքից այն տպավորությունն է թողնում, թե ժամանակը սուղ է, և Ջարյանը նախապես ուրվագծումներ է կատարում զուտ ճանաչողական նշանակությամբ՝ հետագայում իր միտքն ավելի հանգամանորեն զարգացնելու: Իրականում դա զարյանական ոճն է՝ հակիրճ, բայց կոնկրետ ու իմաստուն՝ հայողի խորաքնին վերլուծությամբ, աֆորիստիկ սահմանումներով: Սա պայմանավորված է նաև իր «Երկիրներ և աստվածներ» շարքի երկրորդ գրքում¹⁴ ամերիկյան քաղաքի, քաղաքակրթության, մտայնության առավել հանգամանալից անդրադարձներ կատարելով: Նավատոմարներից մեկում (1947) Ջարյանը մասնավորապես անդրադառնում է Նյու-Յորքին, որը ներկայանում է իր հակադրությունների միասնությամբ՝ «բարձրություն և վիհ»: Այս քաղաքի մտայնությունն ու իրականությունը «փախչում է ինքն իրենից: ... Կանգ չի առնում, որպեսզի չվախի, որպեսզի չի գիտակցի» (Ն., 384): Այն զետեղված է «այդ երկու ծայրահեղություններից չեզոքացած մի ինչ-որ անորոշում: ... Այդ բարձրությունը, շարունակում է մեկնել Ջարյանը, - օրգանական զարգացման բնական արդյունք չէ, ... այլ պարտադրված կրկնություն, թվաբանական գումարում: ... Վիհը՝ քար է և խավար: ... Կազող գերեզման է» (Ն., 384): Եվ այդ հսկայական տարածումը ներկայանում է արհեստածին, բնագանցական ու դատարկ «անմարդկային մի երկրաչափություն», ուր տիրապետում է կենսաբանական միակ այն գրգիռը, որ զրկում էր արարման հաճույքից՝ թողնելով միայն մի սին պատրանք՝ «Նյութը... գտնելու ու վատնելու երջանկությունը»: Եթե, ըստ Օսվալդ Շպենգլերի, «Քաղաքի յուրաքանչյուր ձև (օճրաձև), որ բնույթ ունի, ունի նաև ազգային խառնվածք»,¹⁵ ապա Ջարյանն այս դրույթին հավելում է այն տեսակետը, թե այն կրում է նաև որևէ մտածողի փիլիսոփայական հայեցակարգի դրոշմը, օրինակ՝ հուլանդականը՝ Դեկարտի, հունականը՝ Պյոթագորասի, հայկականը՝ Դավիթ Անհաղթի: Այս իմաստով՝ ամերիկյան քաղաքն առհասարակ զուրկ է փիլիսոփայությունից, կենսազգացողությունից, գաղափարախոսությունից...

Մտայնության բացակայություն և ամլություն է հուշում նաև Ավստրիայի կենտրոն Վիեննան: Հասնելով սոցիալ-տնտեսական բարձր մակարդակի՝ քաղաքը կորցրել է իր համար ամենաէականը: Նյութական բավարարությունը լճացում է առաջացրել, և մարդիկ ապրում են «բուսական կյանքով»՝ ստվերի պես: Իմացական ու բարոյական ոլորտներում բացակայում է ձգտումը, հոգևորի պահանջը: Ամեն բան հուշում է մտքի և հոգու ամայություն: Քաղաքն այլևս անվերադարձ խզել է իր կապերը անցյալում ոճեր, իմացական հայտնություններ արարելու երբեմնի փառքից ու ձգտումից: Ճաշակը, պահանջմունք-առաջարկը հուշում են ժամանակավորի մասին:

Ավստրիայի ծայրամասային քաղաքները, սակայն, տարբերվում են Վիեննայից՝ չնայած ժամանակի արձանագրած առաջընթացին: Հին ու գավառական քաղաք հիշեցնող Մելքը, Մարիադիլը, ուշադրության են արժանանում պատմական կոթողներով, Մադրիդի Էսկուրեալը հիշեցնող «հսկայական» վանքերով, մթնոլորտի խաղաղությամբ: Լինցը, Սալցբուրգը մարմնավորում են ծննդյան տոների հեքիաթը՝ ամբողջովին լուսավորված, շքեղ, լի խանութներով, մթնոլորտի տոնական տրամադրությամբ: Սալցբուրգը զանազանվում է 18-րդ դարի ոճի պահպանմամբ ու

¹⁴ Կոստան Ջարյան, Միացյալ Նահանգներ, Երևան, 2002:

¹⁵ Օ. Շպենգլեր, *Закат Европы*, N 2, Москва, 2003, с. 175:

Մոցարտի անունը շահագործելով. «Ամեն տեղ Մոցարտ, Մոցարտ, Մոցարտ՝ եկամուտի աղբյուր» (Ն., 514): Բագդաստայնում կյանքը ճնշող է, միօրինակ, կեղծ. «Ամեն բան շատ սուղ, շատ բուրժուա և շատ գորշ» (Ն., 514): Այստեղ միակ նորությունը բուժիչ ջրերն են, իսկ ընդհանուրը ավստրիական գավառական մյուս քաղաքների հետ՝ նեղ ճանապարհները, գինետները, նորակառույց հսկայական շենքերը:

Կոստան Ջարյանի օրագրություններում առանձնանում են ծովեզրյա քաղաքները: Դրանք բոլորն էլ արտաքնապես գեղեցիկ են, հրապուրիչ, օդը թեթև է, մաքուր, շոյող, միջավայրը՝ արկածների ու առասպելական խորհուրդների դյուբանքներով խոստումնալից: Ուտրեխտը, չնայած նավաշինական ու արդյունաբերական կենտրոն լինելուն, ներկայանում է իր մաքրությամբ, կանաչազարդությամբ, շինությունների համաչափ դասավորությամբ, կազմակերպվածությամբ՝ տարբերվելով հարևան Բելգիայի ծովափնյա քաղաքներից, որոնք նավթի, մարդկային ճիգի, խառնաշփոթության պատկեր են: Նեապոլը (Նապոլի) տարբերվում է մասնավորապես եղանակի փոփոխական բնույթով: Հանկարծակի բռնված տեղատարափը նույնքան անակնկալ էլ ընդհատվում է, և արևը, ինչպես «էլեկտրական արդուկ», սկսում է կիզել՝ մթնոլորտն օժելով տոթահար հույզերով: Քաղաքը նմանվում է տեսարժան վայրերի գունագեղ ցուցահանդեսի, իսկ երգի, աղմուկի, սրտահույզ մեղեդիների աններդաշնակ համանվագի մթնոլորտում կյանքը «սեր է, գինի, ոճիր»: Սակայն Նեապոլը Ջարյանին այնքան էլ հաճո չէ, քանզի «դժնի» խորհուրդներ է քողարկում: Այն հիշեցնում է արևելքը՝ «ամենաբացասական իմաստով»: Ստամբուլը, Տրապիզոնը, Իզմիրը արևելյան հեքիաթների միստիկ խորհուրդների, տիեզերքի թաքնաթաքուր գաղտնիքների վերծանման շունչն են հևում: Սակայն այդ ամենը՝ սպասման հեռավորությունից: Իրականում առաջին աշխարհամարտը ամայացրել ու մերկացրել է ծովեզրյա այդ քաղաքները: Կյանքը նրանցում մեռած է, ամեն բան հուշում է լքում և ավեր: Իզմիրը, պատերազմական ցնցումների հոգեվարքի մեջ, բնանկարի իր հանդարտությամբ հուշում է, թե նախկինում որքան գեղեցիկ է եղել՝ պարտեզներով, ամառանոցային պալատներով, կանաչազարդ բլուրներով շրջապատված: Ամայացած, անհյուրընկալ դարձած ծովափնյա այս քաղաքը այլևս «ուրվականի» է նման, որի թշվառությունից «մարդ ամաչում» է: Տրապիզոնը հակասական զգացողություններ, հուշեր է արթնացնում: Քաղաք, որի հետ Ջարյանը «խորհրդաւոր յարաբերութիւններով է կապուած», որի հետ առաջին ծանոթությունը արկած, վախ ու հեքիաթ է հիշեցնում: Ջարյանի երևակայության մեջ հառնում է նրա «հեքիաթային տեսիլքի» պատմությունը՝ հարստության, գեղեցկության, իշխանության փառահեղ ներդաշնակությամբ: Քաղաքը պարբերաբար է փոխում իր դեմքը. պատերազմից առաջ այն առասպելական հարստության և ուղևորության մեկնող քարավանների, մուրացիկների, «կեղտոտ և նեղ փողոցների» խառնուրդ է, պատերազմից հետո նրանում իշխում է արյան հուշը, վախի լռությունը: Փողոցներն ամայի են, տներն ու հաստատությունները՝ դատարկ: Տարիներ անց կրկին այցելելով Տրապիզոն՝ Ջարյանն արձանագրում է քաղաքի վերակենդանացումը: Այն դարձել է նավահանգստային ու առևտրի խոշոր կենտրոն, սակայն պահպանել ոճրագործի իր հոգեբանությունը:

Անհյուրընկալ, աղքատ, փնթի է Բաթումը: Նրա՝ մարդկային արժանապատվությունն անհարկի վիրավորելու բրտությունն ու անհաղորդակից լինելը Ջարյանի լավատեսությունը վերագրում է դեռևս այստեղ նոր-նոր հաստատված խորհրդային կարգերին: Թիֆլիսը խորհրդավոր է, չվստահող: Նրա մթնոլորտը չարագուշակ է ու անկռահելի, մարդիկ քայլում են վախեցած ու զարմացած հայացքներով: Այն իր կենսագրությունից իսպառ ջնջել է ազգային

դիմագիծը, կորցրել արկածախնդրի համակրելի ձգտումները: Հավակնելով արևմտյան ու արևելյան ոճերի համադրության, շքեղության՝ վերածվել է «պարապի»: Տարօրինակն ու անմեկնելին այն է, որ քաղաքին դեմք ու յուրահատկություն է հաղորդում հայկական եկեղեցին. «Քաղաքի հաւասարակշռութիւնը յենուած է հայ գմբէթների վրայ: Եթէ այդ գմբէթները քանդեն, քաղաքը անդունդը կը գլորուի»: ¹⁶ Նոր կարգերը ողբերգության դրոշմն են թողել նաև Հայաստանի՝ առանց այն էլ թշվառ գյուղաքաղաքների վրա: Հալածվում և նորովի է մեկնաբանվում հայոց հոգևոր կենտրոն Վաղարշապատը, իսկ Գյումրին քողարկում է արվարձանային իր չքավորությունը: Դարասկզբին Երևանը գավառական սակավապետ քաղաք էր, որի աշխարհագրության սահմանները ձգվում էին երկու թաղամասերի միջև՝ Կոնդի ու Քանաքեռի: Այն նման էր «մեծ ու աղքատիկ ընտանիքի», ուր պահպանվել էր կենցաղի նահապետական պարզությունը, քրիստոնյայի խոնարի վեհությունը: Մարդիկ՝ տխուր, մտածկոտ քայլերով, միամիտ-անկեղծ հայացքներով, գնում էին աշխատանքի և վերադառնում վաստակածի հոգնությամբ՝ վայելելու Արարատյան դաշտի վերջալույսը: Ջարյանին սիրելի է այդ թշվառ քաղաքը: Դա ի՞ր ընտրությունն է, ի՞ր «արյունը», ի՞ր «հայրենիքը»: Չորս տասնամյակ հետո գբոսաշրջիկի այցելությամբ Երևան վերադարձած Ջարյանը Երևանը կնմանեցնի «նոր օրերի Աթենքի», իսկ երևանյան կյանքը՝ «չտեսնված նոր մի վերածննդի»:

Փարիզը, Բրյուսելը զարյանական կենսագրության սկիզբը խորհրդանշող քաղաքներ են: Փարիզն ընդմիշտ խզեց կապը մանկության կորցրած եզերքների հետ, ցուցադրեց մարդկային հոգու միայնության հանդեպ իր անտարբեր լռությունը, կրթեց, հղկեց միտքը, սովորեցրեց գոյելու պայքարի գաղտնիքները: Փարիզի կենսափիլիսոփայությունը կուտակված թիվն է, ուր «կեանքը յանձնուել է արծաններին», մարդկային միտքը կողպվել է գրավաճառների հավաքածուներում, և գրգիռը, չհագեցողի անզուսպ ցանկությունը մարդուն վերածել մարմին ունեցող ուրվականի: Գիշերը Փարիզը խորհրդանշում է թռիչք: Իրիկնամուտին, երբ քաղաքի բոլոր հաստատությունները, սրճարանները փակվում են, փողոցները խավարի շղարշն են հագնում, աներևույթ ոգիները դիվային պար են բռնում՝ մրցման հրավեր նետելով աստղերին, երբ աստվածները վերակենդանանում են՝ խլացնելով լռության ձայները, երբ էյֆելի աշտարակը, Պանթեոնը, Նոտր-Դամն ու գոթական եկեղեցիները շուրջպարի են հավաքվում, Փարիզը լքում է Տիեզերքի սահմանները՝ հուշելով Ջարյանին, թե պետք է գնալ, վերադառնալ «տուն»: Բրյուսելն էլ մահվան տենդոտ հետապնդումների, մղձավանջային տեսիլների, ուսանողական փոթորկոտ տարիների, գաղափարական ազդեցությունների, հանդիպում-բաժանում-վերադարձի, հուշերի կենտրոնն է մարմնավորում՝ հոր իմաստուն կերպարով թաթախված: ¹⁷

Օրագրություններում կան քաղաքներ, որոնց հանդեպ զարյանական վերաբերմունքը գերծ է ջերմությունից, կապվածության զգացումից, կրկին վերադառնալու ցանկությունից: Դրանք սառն են, անհասկանալի, զուրկ հրապույրից, էութունից, մտայնությունից, ձգտումից: Երուսաղեմը հակասական տպավորություններ ու զգացողություններ է առաջացնում, իսկ նրա հայկական եկեղեցին՝ վաճառատան տպավորություն թողնում: Սրբատեղի հռչակված քաղաքում մեռած աստծո գերեզմանը կրոնական հնազանդության կեղծավոր ժպիտներով քողարկված հոգևորականների համար մարդկային դյուրահավատությանը վախ ներշնչելու և այդպիսով շահագործելու նոր միջոց է: Բեյրութը սքոլաստիկ է ու իմաստակ (պեդանտ), խեղդող բանտ է՝ միտքը,

16 Կ. Ջարեան, Երկեր, Անթիլիաս, 1975, էջ 92:

17 Այս մասին տես Կ. Ջարեան, Երկեր, Անթիլիաս, 1975, էջ 50-58:

գործունեությունը կաշկանդող. անգամ նրանից հեռանալը բազում արգելքներ հաղթահարելու հետ է կապված: Այն թողնել-հեռանալու, մոռանալու անհագ ցանկություն է ծնում, քանզի իր հետ կապող ոչինչ չունի և չի էլ փորձում ձեռնարկել: Իմիջիայլոց նշենք, որ դրանց բացասական տպավորությունը կապուած է նրա՝ բեյրության «Նավատոմար»-ի ընդհանուր խիստ ժխտական կեցուածքի հետ, հատկապես՝ Բեյրութի պարագայում:

Իտալական քաղաքները Ջարյանի կենսագրության անտրոհելի մասն են կազմում: 1910-ական թվականների Իտալիայի քաղաքներին է նվիրված «Քաղաքներ» խոհագրությունը:¹⁸ Ու թեպետ այս երկիրը ջերմությամբ է հյուրընկալել նրան, սակայն կան քաղաքներ, որոնց մասին Ջարյանը խոսում է առանց որևէ հոգեկան հույզի: Ոչ խոշոր քաղաքներում ընդհանրական է կյանքի միապաղաղությունը, տեսարանի գրավչությունը, տաք եղանակը. այդպես՝ Կանտարան, Միլանը, Ֆլորենցիան... Միակ բացառությունը Պոզիտանոն է, որն, ըստ Ջարյանի, հոգու և բնության հովվերգություն է, Իտալիայի գոհարը: Քաղաքի վերաբերյալ Ջարյանի խոհերը մի շարք ընդհանրություններ են գծում շպենզլերյան տեսության հետ, սակայն ուրույն մեկնաբանումներով: Նավատոմարներում գրեթե բոլոր երկրների պարագայում գրողը համադրում է մեծ ու փոքր քաղաքները: Դա կատարվում է որոշակի միտումով, կանխամտածված: Շպենզլերն իր աշխատության մեջ ակնարկում է, թե քաղաքի պատմությունը, որոշակի փուլեր անցնելուց հետո, զարգացման մի որոշ աստիճանում ծնում է «համաշխարհային մայրաքաղաքը» (матрвая столица)՝ հուշելով քաղաքակրթության ու մշակույթի զարգացման զագաթնակետը: Դրանք սահմանում են քաղաքների՝ այսպես կոչված աստիճանակարգ՝ *համաշխարհային մայրաքաղաք*, «որում, ի վերջո, կենտրոնանում է համաշխարհային պատմության ողջ գործընթացը», և *գյուղաքաղաք* (провинция): Վերջինս իր մեջ ներառում է և՛ քաղաք, և՛ գյուղ՝ անկախ տարածքային սահմաններից, բնակչության քանակից, իսկ առաջինը ջնջում է մարդկային կեցության հասարակարգային, կրոնական պատկանելության սահմանները: Նրա առաջացումը պայմանավորվում է տնտեսա-քաղաքական ուժերի, գիտական-մշակութային մտքի կենտրոնացումով. սկսում է տարածվել ոչ թե օրգանական աճով՝ դեպի վեր, այլ անօրգանական՝ նվաճելով հորիզոնը և տիրելով «գյուղին», ապա սահմանում է «արժեքների» նոր համակարգ, ստանձնում պետության և ժողովրդի ճակատագիրը վճռելու մենիշխանական իրավունքը: Որպես այդպիսին Շպենզլերը առանձնացնում է Հռոմը՝ չթաքցնելով իր հիացումները վերջինիս որդեգրած գոյափոխոփայության հանդեպ: Սա միակ քաղաքն է, որ շարունակում է պահպանել իր երթը քաղաքակրթությունների պատմության ընթացքում, որովհետև «կարողացավ մեկուսացնել իր քաղաքական վարքը հելլենիզմի ֆելլաիյան բնագոյներից»:¹⁹ Այս տեսակետը Ջարյանը տարածում է հայոց պատմության համատեքստում. «Արդյոք պետք է ցավե՞լ, թե պետք է ուրախանալ, որ Հայաստանը, Էգեական ծովից մինչև Փենջաբ տարածվող, Ալեքսանդր Մեծի կայսրության մեջ չմտավ... Մենք ավելի մոտ եղանք Հռոմեական Կայսրության: Սանչո Պանչոն դարձավ նաև մեր կղզու կառավարիչը» (Ն., 391):

Շպենզլերն իր տեսության մեջ պարզապես սահմանում է համաշխարհային մայրաքաղաքի և գավառի տարբերության պատմությունը: Ջարյանը դա մատուցում է «գործնականորեն»՝ ընդհանրացումներ կատարելով անմիջական տպավորությունների, հանգամանակից վերլուծությունների արդյունքում: Մարկ Նշանյանն իրավացիորեն դիտում է, թե այդ կերպ Ջարյանը փորձում էր «քաղաքը

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ О. Шпенглер, Закат Европы, N 2, Москва, 2003, с. 190:

ներկայացնել իբրև միասնական ու բազմակի օրկանիզմ մը, որուն տարբեր բջիջները սովորաբար՝ անտեղեակ են իրարմէ ու պէտք ունին համադրուելու, կամ աւելի ճիշտ՝ իրենց համադրական կեանքին գիտակցութեան հասնելու»:²⁰

Բնապ չհակվելով շպենգլերյան «ազատ ոգու» տեսութեանը՝ գրողը, արձանագրելով երկու հիմնախնդիր, հարցադրումով է հանդես գալիս. ինչպէ՞ս է դրսևորվում ոգու այդ «ազատութիւնը»: Առաջինը քաղաքի անկման նախնական դրսևորումն է, որ աղերսներ է արձանագրում Շպենգլերի՝ քաղաքի ու քաղաքակրթութեան պատմութեան տեսութեան անկման սահմանումից. «Եվ մեր դարը քաղաքների մեծ ողբերգութեան դարն է,- գրում է Ջարյանը: -Մենք մտել ենք պատմութեան աղետալի շրջանը, և քաղաքը, որ հանդիսանում է արդի քաղաքակրթութեան համադրական գագաթնակետը, ընդունում է առաջին հարվածները» (Ն., 427): Անշուշտ, քաղաքն անհաղթահարելի ուժ է՝ սեփական կյանքն ունեցող: Նրա «ճակատագրին» անխուսափելիորեն «կապված են միլիոնավոր մարդիկ»: Քաղաքաբնակի հետագա ճակատագիրը Ջարյանի համար երկրորդ հիմնախնդիրն է: Այստեղ նա, միաժամանակ, հայտնաբերում է «մեծ քաղաքի ազատ ոգու» պարադոքսը: Քաղաքաբնակն այլևս անվերադարձ կորցրել է իր արմատները, գրկվել ազատութեան և ընտրութեան կատարելու իրավունքից, մարդկային հաղորդակցման կարողութունից, մտերմիկ ջերմութունից. «Մեծ քաղաքի կենտրոնաձիգ, խճողված, մեքենացած կյանքը մարդս ենթարկել է անանհատի, անանունի:... Մասսայական շարժման մեջ կորած՝ մարդկային անհատն իրեն զգում է մենակ, շղթայված, ստրկացած: Նա ճանաչում է անհամար անձնավորութիւններ և չի ճանաչում ոչ մի մարդ: Նա անդադար վագում է ու ոչ մի տեղ չի հասնում: Ամեն ինչ պատահական է և թվաբանական...»:²¹ Անէութեան, անսահմանութեան հանդէպ իր վախը վերջինս քողարկում է, ճգնաժամը հաղթահարում խաղի, զվարճութեան մակերեսային գրգիռներում:

Ըստ Օ. Շպենգլերի՝ յուրաքանչյուր քաղաք մշակութային որևէ դարաշրջանի արգասիք է, հետևաբար՝ այդ մշակույթի կրողը: Ըստ այդմ՝ քաղաքն ունի ոգի, ոճ, ազգային խառնվածք, դեմք, նույնիսկ միմիկա: Ջարյանը համաձայն է, սակայն քաղաքն այդքանով չի սահմանափակվում: Նա քաղաքը դիտարկում է պատմամշակութային և գոյափիլիսոփայական ոլորտներում՝ հատկանշելով մտայնութեան ձգտումը, գաղափարախոսութեան և կենսափիլիսոփայութեան զգացողութիւնները, հոգեբանական ընդգծված յուրահատկութիւնները, ազգային-էթնիկական առանձնահատկութիւնները: Ու նաև՝ Ջարյանը յուրաքանչյուր քաղաք տարրորշում է ըստ սեռային պատկանելութեան՝ իգական կամ արական, որ անթաքույց ցուցադրվում է սեռական բնագոյները դրսևորելու ինքնատիպ հնարքներում: Իր օրագրութիւններում Ջարյանը քաղաքները բնութագրում է՝ իրեն հատուկ ոճով համեմելով մանկութեան ու պատանութեան նվիրական հուշերով, երբեմն ուղեգրութեան ժանրի սահմաններում՝ հակիրճ, ամբողջական, տարողունակ: Այս քաղաքներում է Ջարյանն զգացել կարոտի, կորստի ու բաժանման թախիծը, սիրո, արկածի, վայելքի ու վտանգի արբունքը, ճաշակի ու մտքի հայտնութիւնը, ինչու չէ՞ նաև կոտորածի ու վախի սարսափը: Քաղաքը կենսական նշանակութիւն ունի Ջարյանի համար, քանզի այն գրողի անհատականութիւնը կազմող հոգեբանական աշխարհագրութիւնն է. «Քաղաքների երեկոների առջեւ նստած՝ մենք որոնում ենք մեր էութեան գաղտնիքը: Մենք՝ թափառական հոգիներս»: Քաղաքն այն դիտակետն է, որը հնարավորութիւն է ընձեռում ճանաչելու և

20 Մարկ Նշանեան, Կոստան Ջարեան. Անկարելի թատրոնը, «Բազմավեպ», 1994, էջ 183:

21 Կոստան Ջարյան, Դեպի Արարատ, էջ 311:

համադրելու արտաքին (օտար) և ներքին (սեփական) աշխարհները: Դրանց հատման կետում բացահայտվում են գրողի անհատականությունը, աշխարհայացքը, ապրելու և զգալու կերպը: Քաղաքը միջոց է՝ նշակութային, քաղաքակրթական շրջադարձերի վերաբերյալ սեփական մտորումները, տպավորությունները, գաղափարները, մեկնաբանումներն ընդհանրացնելու համար: Ու նաև՝ քաղաքն օրագրելու զարյանական գրական հնարանքներից մեկն է: